ԱՍՏՂԻԿ ՍՈՂՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ORCID ID: 0000-0002-0976-9954
astriksoroyan@litinst.sci.am,
+37495732771

ՄԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ORCID ID: 0009-0007-0268-0512
Երևանի պետական համալսարան
meri.khachatryan22@edu.ysu.am

DOI: 10.54503/1829-0116-2023.1-76

ԵՐԱԶՆԵՐԸ՝ ԻԲՐԵՎ ԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՈՂ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐՆԵՐ, ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ «ԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆՎԵԼ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր – Երազ, խորհրդանիշ, արքետիպ, դիպաշար, կանխագուշակող գործառույթ, Ղ. Աղայան, «Արություն և Մանվել», Զ. Ֆրոյդ, Կ. Յունգ

Հոդվածը նվիրված է Ղազարոս Աղայանի «Արություն և Մանվել» վեպում առկա երազների և երազատեսության դրսևորումների քննությանը: Ուսումնասիրության հիմնական նպատակն է պարզել, թե երազը՝ որպես երևակայականի դրսևորում, ինչ հարաբերության մեջ է գտնվում իրական աշխարհի հետ և դառնալով գեղարվեստական արտահայտչամիջոց և դիպաշարի հետագա ընթացքը կանխագուշակելու միջոց՝ ինչպես է բացահայտում հերոսի բնավորությունը, նվիրական զգացմունքները, ներաշխարհը, հոգեբանությունը և նախապատրաստում ընթերցողին երկի սյուժետային հետագա զարգացումներին: Հոդվածում երկայացվում են վեպում առկա երազների և երազատեսության մեկնաբանությունները, որոնք նշանակալից դեր են կատարում ստեղծագործության ներիմաստի, գլխավոր հերոսի անհատականության, ներաշխարհի, բացահայտման գործում: Որպես տեսական հենք կիրառել ենք Զ. Ֆրոյդի և Կ. Յունգի՝ երազների վերաբերյալ տեսությունները, ուսումնասիրության հիմնական մեթոդը միֆաքննադատությունն է:

ASTGHIK SOGHOYAN
Ph.D in Philology,
Institute of Literature after Manuk Abeghyan of NAS of RA
Yerevan State University

MARY KHACHATRYAN
Yerevan State University

DREAMS AS PREDICTIVE SYMBOLIC IMAGES IN THE NOVEL BY GHAZAROS AGHAYAN "ARUTYUN AND MANVEL"

Keywords- Dream, symbol, archetype, plot, predictive function, G. Aghayan, "Arutyun and Manvel", S. Freud, K. Jung

This article is dedicated to the study of the manifestations of dreams and dream visions in the novel by Ghazaros Aghayan "Arutyun and Manvel". The main goal of the study is to find out how a dream, as a manifestation of the imaginary, is in relation to the real world and becomes a means of artistic expression and a means of predicting the further course of the plot, how it reveals the character of the hero, intimate experiences and the psychology of the inner world, how it prepares the reader for the further development of the plot. The article presents the existing interpretations of dreams and dream visions, which were carefully analyzed to understand the role they play in the inner meaning of a literary work, the personality and inner world of the protagonist. The works on dreams by Z. Freud and K. Jung were used as a theoretical basis, the main method of research is myth criticism.

АСТГИК СОГОЯН
Кандидат филологических наук,
Институт литературы им. Манука Абегяна НАН РА
Ереванский Государственный Университет

МЕРИ ХАЧАТРЯН
Ереванский Государственный Университет

СНЫ КАК ПРЕДСКАЗАТЕЛЬНЫЕ СИМВОЛИЧЕСКИЕ ОБРАЗЫ В РОМАНЕ ГАЗАРОСА АГАЯНА «АРУТЮН И МАНВЕЛ»

Ключевые слова- Сон, символ, архетип, сюжет, предсказательная функция, Г. Агаяна, «Арутюн и Манвел», З. Фрейд, К. Юнг

Данная статья посвящена изучению проявлений снов и сновидений в романе Газароса Агаяна «Арутюн и Манвел». Основная цель исследования - выяснить, как сновидение, как проявление воображаемого, находится в отношении к реальному миру и становится средством художественной выразительности и средством предсказания дальнейшего хода сюжета, как оно раскрывает характер героя, интимные переживания, внутренний мир и психологию, подготавливает читателя к дальнейшему развитию сюжета. В статье представлены существующие разъяснение снов и сновидений, которые играют значительную роль в выявлении внутреннего смысла произведения, индивидуальности и внутреннего мира главного героя. В качестве теоретической основы были использованы работы о сновидениях З. Фрейда и К. Юнга, основной метод исследования – мифокритика.

Ներածություն

Աղայանի ստեղծագործության մասին գրվել են տարաբնույթ աշխատություններ, որոնցում գրականագետների ուշադրությունը հիմնականում ուղղված է եղել դեպի դրանց բովանդակային և գաղափարական կողմը (Ասատրյան 1961, Ալեքսանյան 2015, Թորոսյան 2019 ա, Թորոսյան ա 2020), որոշ հոդվածներում էլ վեր են հանվել բանահյուսական մոտիվների աղայանական մեկնությունները (Հայրապետյան 2012-2013, Թորոսյան բ 2019, Թորոսյան բ 2020): Դրանցում, սակայն, հպանցիկ է նշվել իրական և երևակայական աշխարհների հարաբերության փաստը, երազներին վերաբերող իրողությունները մեծ մասամբ շրջանցվել են: Այս հոդվածում Ղ. Աղայանի «Արություն և Մանվել» վեպն առաջին անգամ ուսումնասիրվում է իրականի և երևակայականի հարաբերության, այն է՝ երազի քննության դիտանկյունից: Երազը դիտարկվում է որպես գեղարվեստական երկի կառուցվածքի յուրահատուկ տարր, որը երկի դիպաշարը համեմում է խորհրդավորությամբ, նախապատրաստում ընթերցողին երկի սյուժետային հետագա զարգացումներին, հնարավորություն տալիս խորքային պատկերացում կազմել հերոսների անհատականության և ներաշխարհի մասին, ինչպես նաև՝ բացատրելու երազի արտացոլումները ժողովրդական պատկերացումներում և հայկական մշակույթում: Վերջին տարիներին շեշտակի աճել է գեղարվեստական տեքստում իրական և երևակայական աշխարհների հարաբերության և դրանց յուրօրինակ արտահայտությունը դարձած երազի հանդեպ

տարբեր գիտակարգերի աճող հետաքրքրությամբ. ժամանակակից իրականության մեջ այն գտնվում է հումանիտար մի շարք գիտակարգերի՝ հոգեբանության, գրականագիտության, լեզվաբանության՝ տեքստաբանության, ոճագիտության, պատումնաբանության, ուսումնասիրության կենտրոնում (Федунина 2013: 7-8), ինչն էլ պայմանավորում է հոդվածի արդիականությունը:

Որպես մեթոդական հենք կիրառել ենք կառուցվածքային, միֆաքննադատական, պատմահամեմատական մեթոդները: Երազի դերն ու նշանակությունը Աղայանի վեպի կառուցվածքային համակարգում բացահայտելու համար՝ հենվել ենք Զ. Ֆրոյդի և Կ. Յունգի՝ երազների վերաբերյալ տեսությունների վրա, ինչպես նաև՝ մեթոդաբանական հիմք են դարձել գրական երազի մասին եղած տեսական դրույթների համադրումը:

Երազը՝ որպես մարդկային ուղեղի ամենաառեղծվածային գործառույթներից մեկը, մշտապես գտնվել է հոգեբանների ուսումնասիրությունների կենտրոնում: Դեռևս անտիկ աշխարհում մարդկանց գրավել են երազները, դրանցում փորձել են տարօրինակ, առեղծվածային և կանխագուշակող հուշումներ գտնել: Երազներին մոտեցել են տարբեր դիտանկյուններից, փորձել բացատրել էությունն ու նշանակությունը: Քննվող երևույթների ուսումնասիրությունը, սակայն, գիտական դաշտ է բերվում միայն 19-րդ դարում, և երազագիտության ասպարեզում նոր էջ է բացվում աշխարհահռչակ հոգեվերլուծաբան Զիգմունդ Ֆրոյդի «Երազների մեկնաբանություն» աշխատությամբ: Ըստ Ֆրոյդի՝ դրանք մտքերի ու գաղափարների պատճառահետևանքային կապեր են, որոնց ակունքները մարդու մանկության շրջանում են (Фрейд 1997: 54-55):

Երազային աշխարհը խորհրդանիշների հարուստ և բազմաշերտ համակարգ է, երազատեսի մասին տեղեկատվության անսպառ աղբյուր, և ճիշտ մոտեցման դեպքում հնարավոր է ամբողջացնել վերջինիս հոգեբանական նկարագիրը: Ֆրոյդի խոսքերով. «երազում սիմվոլներն անմիջականորեն արտացոլում են որևէ իրի կամ երևույթի թաքնված իմաստը» (Freud 1938: 370): Բացահայտելով այդ սիմվոլների նշանակությունը՝ մենք հնարավորություն ենք ստանում առավել խորքային պատկերացում կազմելու մարդու ներաշխարհի, հույզերի և անհատականության մասին: Շվեյցարացի նշանավոր հոգեբան,

Ֆրոյդի աշակերտ Յունգի բանաձևմամբ. «Երազը դեպի հոգու գաղտնարանն ուղեկցող դուռ է» (Юнг 1912: 120), իսկ այդ դռնից այն կողմ գտնվող աշխարհն անպայմանորեն պետք է բացահայտվի:

Առաջ քաշելով արքետիպի գաղափարը՝ որպես հոգեկանի բնազդային արտահայտություն, Յունգը վեր հանեց մարդու անգիտակցականում ծնվող երևակայական պատկերների ձևավորման սկզբունքները, որոնք առկա են նաև երազներում: Հոգեբանության կողմից ուսումնասիրվող այդ շրջանակը թափանցեց նաև գրականագիտություն, և նոր գործիքակազմ տվեց գեղարվեստական գործերի թաքնված իմաստները և գրողի կյանքի տարբեր խորշերը բացահայտելու համար:

Գեղարվեստական ստեղծագործության մեջ արքետիպը մարմնավորվում է խորհրդանիշների միջոցով, որի մեկնաբանությունը կարելի է գտնել մարդու հոգեկան աշխարհում, հատկապես՝ անգիտակցականում:

Գրողները, իրենց երկերում կիրառելով յուրօրինակ երազային այլաբերություններ, հերոսների անգիտակցականում արթնացնելով առեղծվածային, խորհրդավոր պատկերներ, երևակայական էակներ ու երևույթներ, գործող հերոսին անսահմանափակ հնարավորություններ են տալիս՝ իրականության պատնեշը ճեղքելու և տարածաժամանակային սահմաններից ու կաղապարներից դուրս գտնվող աշխարհում առանց արգելքների տեղաշարժվելու համար:

Ուսումնասիրության նյութ դարձնելով Ղազարոս Աղայանի «Արություն և Մանվել» վեպում առկա երազները և երազատեսության դրսևորումները՝ հնարավորություն ենք ստանում մի կողմից՝ բացահայտելու հերոսի լիաբուռն ներհոգեկան աշխարհը, մյուս կողմից՝ ներկայացնելու երազի ունեցած դերը ժողովրդական պատկերացումներում և հայկական մշակույթում:

«Արություն և Մանվել»-ի գլխավոր հերոսը պատանի Աղայանն է: Ինքնակենսագրական նյութի հիման վրա հեղինակը ներկայացրել է 19-րդ դարի 50-60-ական թվականների հայ իրականության պատկերը, մտածողությունը, բարքերը, լուսավորության համար խավարի դեմ պայքարող հերոսական անհատին: Հեղինակի գաղափարների արտահայտիչը Արությունն է, մասամբ նրա մտերիմ ընկերը՝ Մանվելը:

Դեռ մանկուց իր հրաշալի ընդունակություններով առանձնանա-

լով շրջապատող միջավայրից՝ Արությունը ձգտել է պայքարել տիրող խավարի և հետամնացության դեմ, գիտության լույսով ազատագրել մարդկանց միտքը սնոտիապաշտությունից, մոլորություններից, Աղայանի բնորոշմամբ. «Խավար էր այդ ժամանակ մեր աշխարհը, շատ էր խավար. լուսավոր մարդուն պետք էր լապտերով փնտրել» (Աղայան 1963: 332): Եվ երբեք չկորցնելով լուսաշող ապագայի հանդեպ հավատը՝ նա դարձավ պայծառ մտքի ջահակիր, լուսավորության քաջարի մարտիկ:

Ժամանակի հայկական իրականության գեղարվեստական պատկերումը տրված է Արությունի և վեպի մյուս գործող հերոսների միջև եղած բախումների միջոցով:

Արությունը, ծանոթանալով Մանվելի՝ իր գաղափարակից երիտասարդի հետ, զարմացնում է նրան իր՝ Շամշուլդա գյուղի քահանա տեր Պետրոսի մոտ ստացած գիտելիքներով՝ Հին և Նոր կտակարան, աստվածաբանություն, քերականություն, Հարանց վարք, Այսմավուրք, Պոլնձե քաղաքի պատմություն, Յոթն իմաստասիրաց գիրքը, Տաթևացու հատորները և այլ բարոյական բովանդակությամբ գրքեր: Իսկ Մանվելը նրան պատմում է քաղաք գնալու և այնտեղ ուսանելու մասին՝ շարժելով Արությունի հետաքրքրությունը:

Մանվելին հրաժեշտ տալուց հետո Արությունը սկսում է երևակայել «մի բոլորովին իրան անծանոթ աշխարհ»-ի մասին: Այդ երևակայության և ցանկության ազդեցության տակ մի քանի խորհրդանշական երազ է տեսնում, որոնք վեպի դիպաշարային համակարգում քննելով՝ հնարավորություն ենք ստանում բացահայտելու հերոսի ներաշխարհը, հույզերը, մտահոգությունները, թաքուն իղձերն ու ցանկությունները:

Անդրադառնալով երազների քննությանը՝ գրականագետ Հայկանուշ Շարուրյանը նշում է, որ գեղարվեստական ստեղծագործության մեջ «Երազներին բնորոշ գրական գործառույթներից ամենաուշագրավը թերևս կանխատեսելու կամ գուշակելու գործառույթն է, որն իր հերթին բաժանվում է երկու ներքին ենթաշերտերի՝ ա) երբ երազները պարզապես կատարում են ապագան կռահելու գործառույթ ու, իբրև այդպիսին, կիրառում են խորհրդանշային պատումը, բ) երբ երազները սերտորեն առնչվում են գեղարվեստական երկի բուն դիպաշարին ու հետամուտ են ստեղծելու սպասման նպատակը» (Շարուրյան 2016: 40):

Արությունի երազները և՛ սերտորեն առնչվում են վեպի բուն դիպաշարին, և՛ ունեն ապագան գուշակելու գործառույթ:

Քաղաք գնալու և այնտեղ սովորելու մասին մտքերով տարված՝ Արությունը գիշերը երազում տեսնում է, որ հայտնվել է քաղաքում, փնտրում է Մանվելին: Տեսնում է նրան իրենից հեռու կանգնած, ձայն է տալիս, բայց Մանվելը չի լսում: Սկսելով ավելի բարձր բղավել՝ զարթնում է իր իսկ ձայնից, ափսոսում, որ զրկվեց Մանվելին տեսնելու հնարավորությունից: Շուտով փակում է աչքերը, որ դարձյալ հանդիպի Մանվելին, բայց իր ցանկությանը հակառակ՝ հանդիպում է օձերի, վիշապների, որոնցից սաստիկ վախենալով՝ սկսում է փախչել. Օձերը, սակայն, շրջապատում են նրան: Մնալով շփոթված՝ Արությունը ձգտում է թռչել դեպի վեր և թռչում է թռչնի պես: Սկսում է բարձրից ծիծաղել օձերի վրա և «նրանց գլխին օփսուն կարդալ, որ սովորել էր տեր հորից» (Աղայան 1979: 106): Այդպես օդի մեջ ճախրելով՝ իջնում է մի բլրի կամ բարձր քարի վրա, բայց զարթնում է ու ափսոսում, որ զրկվեց թռչելու հնարավորությունից: Անհանգիստ մտածում է, թե ինչու դեպի քաղաք չէր թռչում: Կրկին փակում է աչքերը, որ երազի մեջ թռչի դեպի քաղաք, «բայց, սրա հակառակ, իր գրքերի մեջ գտնում էր զանազան ձեռագիր մատյաններ, որոնց մեջ գրված էին լինում փակագրերով արձանագրություններ, խրթին շարադրություններ, զարհուրելի ճիվաղական պատկերներ, թալիսմաններ, անըմբռնելի աղոթքներ» (Աղայան 1979: 106), դժվարությամբ փորձում է կարդալ, բայց կարդացածից ոչ մի բառ չի հասկանում: Երազհարամ լինելով՝ հանկարծ զարթնում է, փորձում հիշել իր տեսածը, բայց ոչինչ իր կարդացածից չի մտաբերում:

Մի քանի ամիս անց տեր Պետրոսը հայտնում է Արությունին, որ գնալու է քաղաք, նրան էլ ուզում է իր հետ տանել, ցույց տալ քաղաքը: Դա իսկապես հրաշալի նորություն էր պատանու համար: Տղան այնքան է ուրախանում լուրից, որ կարծում է՝ երազում է լսում այդ խոսքերը:

Երազային հնարի միջոցով հեղինակը պատկերում է հերոսի հոգեկան ապրումների խորությունը: Մանվելի հետ քաղաք գնալու և այնտեղ ուսում ստանալու մասին զրույցից հետո տեսած երազը Արությունի՝ օրվա ընթացքում ձևավորված տպավորությունների արտացոլումն է, որը Յունգը անվանում է «օրվա մնացորդ» (Юнг 1969: 193):

Այդ երազի միջոցով հեղինակը նաև արտակոմպոզիցիոն տարրի միջոցով իրացնում է հերոսի՝ քաղաքում լինելու և Մանվելին տեսնելու ցանկությունը, որը ամիսներ անց իրականանում է:

Երբ երազում բարձր ձայն է տալիս Մանվելին ու զարթնում իր իսկ ձայնից, փորձում է նորից քնել, որ հանդիպի ընկերոջը, սակայն Մանվելի փոխարեն երկրորդ երազում հանդիպում է օձերի ու վիշապների, որոնք շրջապատում են իրեն:

Երազի կերպարները, երևույթները, իրադարձությունները կապված են ոչ միայն տվյալ մարդու անձնական ապրումների, այլև ազգային պատկանելության և հոգեկերտվածքի հետ (Юнг 1912: 149):

Օձը՝ իբրև արքետիպ, խորհրդանշում է իրար հակադիր երևույթներ: Այն և՛ իմաստության, խելամտության, և՛ խարդավանքի խորհրդանիշ է: Ժողովրդական պատկերացումներից ելնելով՝ առասպելական վիշապ օձը ներկայացվել է որպես ջրի ակունքին նստած հրեշ, որը խորհրդանշել է ջրի պաշտանմունքը: Ընդհանրապես վիշապը իր նախնական արխետիպային-խորհրդանշական ընկալմամբ համարվել է խավարի, քաոսի մարմնացում: Վիշապը ժողովրդական պատկերացումներում ընկալվել է որպես մեծ օձ: Այն հաճախ նույնացվում կամ զուգահեռվում է օձերի հետ. «Վիշապը սովորաբար նշանակում է «մեծամեծ օձ» և հատկապես «ջրային մեծ օձ» (Ալիշան 2002: 81):

Յունգը վիշապին ներկայացնում է որպես հրեշ, որը միավորում է օձի ստորերկրյա և թռչնի օդային սկզբունքները (Юнг 2008: 603): Այդ պատճառով էլ վիշապները հաճախ ներկայացվում են որպես թևավոր էակներ, որոնք ճախրում են օդում և ցած են իջնում՝ քամի առաջացնելով:

Արությունի երազում հանդիպող օձերը, վիշապները ունեն իրենց յուրօրինակ նշանակությունը և խորհրդանշում են լուսավորությունն ու առաջընթացը կաշկանդող խավարամիտ մարդկանց:

Գլխավոր վիշապը հերոսի հայրն է՝ Ավետիքը, ով բռնակալ է դարձել զավակների և կնոջ նկատմամբ: Իր հուշագրության մեջ խոսելով հոր մասին՝ Աղայանը տալիս է նրա արտաքինի նկարագրությունը, որ լիովին ներդաշնակ է վերջինիս ներաշխարհին. «Հայրս մի զարհուրելի մարդ է նաև, իր հսկայական հասակով, իր բարկացկոտ և կնճռոտ դեմքով, իր ծանրաբարոյությամբ և մանավանդ իր կամակորությամբ և այն մեծ համարմունքով, որ վաստակել է իր մասին» (Աղայան 1963: 117): Հոր կոպտությանը, բռնակալությանը հակադրվում է մոր՝ Հռիփ-

սիմեի քնքշությունը, ով վեճերի ժամանակ միշտ փորձել է հանդարտեցնել լարված ընտանեկան հարաբերությունները՝ երբեմն իր վրա կրելով որդուն ուղղված հարվածները:

Երբ Արությունը ուսում է ստանում Ներսիսյան դպրոցում, զինվում նոր գաղափարներով ու գիտելիքներով, հասկանում է, որ մարդկանց միտքը միայն գիտության լույսով պետք է ազատագրել ավանդական մոլորություններից: Վերադառնալով գյուղ՝ փորձում է իր ձեռք բերած գիտելիքներով լուսավորել շրջապատը, սակայն հայրը չի ընդունում որդու նոր գաղափարները, հալածում է նրան խավարի դեմ ընդդիմանալու համար, ոչնչով չի օգնում նրան ուսումը շարունակելու համար, վռնդում է տանից՝ իբրև «աստուծո ծրից դուրս եկած անառակ որդու» (Աղայան 1963: 330):

Հոր այսպիսի վերաբերմունքը խոր ազդեցություն է ունենում պատանի Արությունի ներաշխարհի վրա: Արությունի երազում հանդիպող օձերի, վիշապների միջոցով հեղինակը ներկայացնում է այն բոլոր մարտահրավերները, որոնք պետք է հաղթահարվեն հերոսի արիության ուժով:

Մնալով օձերի մեջ շրջապատված՝ նա ձգտում է թռչել դեպի վեր և թռչում է թռչնի պես՝ բարձրից ծիծաղելով նրանց վրա: Թռչելով և ձեռք բերելով թռչնին բնորոշ հատկանիշներ՝ հերոսը առանձնանում է այդ միջավայրից, բարձրից նայում նախապաշարումներին, սնոտիապաշտությանը գերի մարդկանց:

Այս երազում Աղայանը զուգահեռ է անցկացնում Արությունի և թռչնի միջև, քանի որ նա էլ թռչնի պես ուզում է լինել անկաշկանդ, ազատ: Առաջադեմ մտայնության տեր պատանին ձգտում է իր անընկճելի կամքով ու դժվարությունների դեմ մաքառելու կորովով տարբերվել բոլորից, ինքնուրույն հաղթահարել ու հասնել բարձունքների:

Այդպես օդի մեջ ճախրելով՝ Արությունը իջնում է մի բլրի կամ բարձր քարի վրա, այսինքն՝ իջնում է իրականություն, նորից հայտնվում իր նախկին միջավայրում, քանի որ իրականության հետ բախումը անխուսափելի է:

Հաջորդ երազում հանդիպող զանազան փակագրերով արձանագրությունները, խրթին շարադրությունները, զարհուրելի ճիվաղական պատկերները, թալիսմանները, անըմբռնելի աղոթքները, որոնք Արությունը չի կարողանում կարդալ, իրականության հարթության մեջ ծանոթ են եղել նրան, դրանք կարդացել է տեր Պետրոսի մոտ: Նրա

պես սուր հիշողությամբ, ընդունակ և երևակայող պատանին հեշտորեն կարողացել է յուրացնել տեր Պետրոսի տված բոլոր դասերը: Նրա ունեցած գրքերը ասես մշուշում էին պատանու միտքը մտացածին, ոչ իրական, առասպելախառն պատմություններով:

Այս երազը միևնույն ժամանակ կարծես կանխագուշակում է նաև վեպի հետագա զարգացումը. Սովորելով թիֆլիսյան միջավայրում՝ Արությունը ձեռք է բերում իրական գիտելիքներ, հասկանում է, որ իր սովորածները սնոտիապաշտության արդյունք են եղել: Ինչպես տեսնում ենք, Արությունի խորհրդանշական երազները մի կողմից՝ սերտորեն առնչվում են վեպի բուն դիպաշարին, բացահայտում հերոսի ներաշխարհը, բնավորությունը, մյուս կողմից էլ՝ կատարում են ապագան կանխագուշակելու գործառույթ՝ նպաստելով սյուժեի զարգացմանը, հուշելով ընթերցողին, որ գլխավոր հերոսը պետք է շատ փորձություններ հաղթահարի, պայքարի իր միջավայրի քարացած բարքերի դեմ:

Այդ ժամանակ ժողովրդի շրջանում տարածված էր թալիսմանների, գուշակությունների, երազների հանդեպ հավատը: Իր հուշամատյանում հեղինակը գրում է. «Պառավ կանայք զարմանալի երազներ էին տեսնում ինձ համար և գալիս պատմում մորս, իսկ փալչիքը հրաշալի գուշակություններ էին անում» (Աղայան 1963: 340):

Վեպում գուշակության առանձին հատվածի ևս հանդիպում ենք: «Թասին մտիկ տվող» կինը Արությունի համար նախ լավ բախտ է գուշակում. «Տերտեր կդառնաս, բայց կնիկդ կմեռնի, կերթաս վարդապետ կդառնաս, հետո եպիսկոպոս կդառնաս, հետք կաթող...», ուզենալով ասել՝ կաթողիկոս կդառնաս, խոսքը փոխում է. «Է՜, դու տերտեր չես դառնալ, քո մոր սրտինը չի կատարվիլ, ձեր տանը քեզ կատեն, դու կերթաս հեռու աշխարքներ, բայց աստված քեզ չի կորցնիլ, դու էլի ետ կգաս ու անվանի մարդ կդառնաս»: Այս ասելով՝ ավելացնում է. «Էս չլինի, էն կլինի, էն չլինի, էս կլինի...» (Աղայան 1979: 94): Հերոսը ընտրում է երկրորդ ճանապարը՝ կյանքում հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ:

Երազատեսության դրսևորումները արտացոլված են նաև հայկական ժողովրդական մշակույթում, որոնց միջոցով մարմնավորվում և մեզ են փոխանցվում մեր ժողովրդի պատկերացումներն ու մտածողությունը, յուրօրինակ և անսպառ երևակայությունը:

Հայոց հնագույն հավատալիքային համակարգում Տիր աստծուն

վերագրել են նաև երազացույցի, երազահանի հատկանիշներ, իսկ նրա պաշտամունքային վայրը կոչել են երազալից կամ «Երազամոյն տեղիք», «որը միաժամանակ գիտությունների ուսուցման տեղ էր, որտեղ հեթանոսական կրոնի պաշտոնակատար քրմերը գիտություն և իմաստություն էին սովորում: Քրմական գիտությունների կամ իմաստությունների մեջ էր մտնում ամենից առաջ գուշակությունը, հատկապես երազների մեկնությունը, երազահանությունը: ...Այստեղ ուխտ եկողները քրմերի միջոցով Տիր աստծոց ստանում էին իրենց տեսած երազների գուշակությունը» (Հարությունյան 1987: 42):

Երազի արտացոլումները սերտորեն կապված են սրբավայրերի և ուխտատեղիների կառուցումների հետ, որոնց կառուցման պայման է դարձել երազատեսության գործոնը: Սրբավայրը կառուցվում է միայն այն դեպքում, երբ երազում հայտնվում է որևէ սուրբ կամ անձ, պատվիրում է կառուցել այն:

«Արություն և Մանվել» վեպի սկզբում պատմվում է ս. Աստվածածնի եկեղեցում կանգնեցված մի «սևագույն, բավականին լայն ու երկայն» որձաքարի մասին, որն անվանվում է «Ջուհար խաչ»: Քարի վրա գրված արձանագրությունը վկայում է, որ այն կանգնեցվել է Սմբատ իշխանի կողմից, բայց ժողովրդի մեջ տարածված ավանդությունը այդ քարին տալիս է հրաշալի ծագում. «Այդ քարը բուսել է ինքն իրան, ասում է ավանդությունը, և սկսել է օրեցօր երկայնանալ»: Ուզենալով յուր նշանակությունը հայտնել ժողովրդին, մեկին երևացել է երազումը և ասել է նրան՝ «Եթե ինձ վերա եկեղեցի չեք շինել, ես այնքան կբարձրանամ, որ գլուխս կհասնի մինչև երկինք»... Երազատեսը պատմել է ժողովրդին, և ժողովուրդ էլ վախենալով՝ թե միգուցե՝ ճշմարիտ՝ ասածի չափ բարձրանա և ժամանակով վայր ընկնի իրանց գլխին, շտապել են եկեղեցի շինել, և քարը դադարացրել է իր երկայնանալը» (Աղայան 1979: 88):

Հետաքրքրական է, որ Աղայանի կյանքում նույնպես երազը մեծ դեր է ունեցել: Ասում են, որ շատ մտերիմ մարդկանց հետ նա ունեցել է հեռազգայական կապ, տեսել ապագայագուշակ և զգուշացնող երազներ: Այդպիսի հարազատներից էր Հովհաննես Թումանյանը: Մտերիմ ընկերները զգում էին միմյանց կյանքում կատարվող կամ կատարված իրադարձությունները: Մի գիշեր Աղայանը երազում զգում է Թումանյանի վատառողջ լինելը, նրա ուշագնացությունը և անհանգստացած, թե որևէ դժբախտություն է պատահել բանաստեղծին, կեսգիշե-

րին շտապում է ամենայն հայոց բանաստեղծի բնակարան, դրսից՝ առանց աստիճանները բարձրանալու, հարցնում նրա որպիսությունը: Առավոտյան ընկերոջը պատմում է իր կանխագուշակ երազի մասին: Թումանյանն էլ, ի դեպ, հետագայում իր չարագուշակ երազում կանխազգում է Աղայանի մահը (Հովհաննիսյան 2019):

Այսպիսի երազներին Յունգը տալիս է հեռազգայական բնորոշումը՝ նշելով, որ կան մարդիկ, որոնք ավելի զգայուն են և տեսնում են հեռազգայական երազներ (Jung 1974: 47-49):

Այսպիսով, քննելով երազատեսության դրսևորումները Աղայանի «Արություն և Մանվել» վեպում, հանգել ենք այն եզրակացությանը, որ երազը, լինելով իրական և երևակայական աշխարհների ճամփաբաժանը, երկի դիպաշարին հաղորդում է խորհրդավորություն, հեղինակին հնարավորություն տալիս բացահայտելու գլխավոր հերոսի ներաշխարհը և ապրումները, ինչպես նաև՝ բացատրելու երազի արտացոլումները ժողովրդական պատկերացումներում և հայկական մշակույթում:

Գրականության ցանկ

1. **Ալեքսանյան Ա.,** Ղազարոս Աղայան, «Հայոց գրականության պատմություն», հ. 3, Եր., «Գիտություն», 2015, էջ 460-465:
2. **Ալիշան Ղ.,** Հայոց հին հավատքը և հեթանոսական կրոնը, Եր., 2002:
3. **Աղայան Ղ.,** Երկեր, Եր., Սովետական գրող, 1979:
4. **Աղայան Ղ.,** Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4., Եր., 1963:
5. **Ասատրյան Ա.,** Ղազարոս Աղայանի գեղարվեստական արձակը, Եր., Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր, 1961, թիվ 8, էջ 51-57:
6. **Թորոսյան Ա,** Բանահյուսական մոտիվների աղայանական մեկնությունները «Արեգնազան կամ կախարդական աշխարհ» հեքիաթում, «Հայագիտության հարցեր» 1(19), Եր., 2020, էջ 143-149:
7. **Թորոսյան Ա,** Գաղափարական հարցադրումները Ղազարոս Աղայանի «Արություն և Մանվել» վեպում, «Հայագիտության հարցեր» 1(16) Եր., 2019, էջ 151-160:
8. **Թորոսյան Ա.,** Արհեստի դերի կարեվորումը Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթում, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն» 2 (29), Եր., 2019, էջ 13-19:
9. **Հայրապետյան Թ.,** Հայ ժողովրդական հեքիաթների աղայանական մշակումների շուրջ, «Ոսկե դիվան», պրակ 4, 2012-2013, էջ 52-55:

10. Հարությունյան Ս., Հայ հին վիպաշխարհը, Եր., 1987:

11. Հովհաննիսյան Ս., Կանխազգացումը Հովհաննես Թումանյանի Կյանքում, «Գրական թերթ», 2019, URL:https://www.grakantert.am/archives/12739?fbclid=IwAR2l2wGttYxypWZVat3DXVPYTXQQtLj6ShHrWFUNqw5e4Na-wF783Uls94E (մուտք՝ 05.05.2023):

12. Շարուրյան Հ., Երազի հոգեբանական գործառույթները գեղարվեստական արձակում, «Հայագիտական հանդես» 1 (31), Եր., 2016, էջ 39-46:

13. Фрейд З., Сон и сновидения, М., 1997:

14. Юнг К. Г., Воспоминания, сновидения, размышления, М., 1969.

15. Юнг К. Г., Психология бессознательного, М., 1912:

16. Юнг К. Г., Психология и алхимия, М., 2008.

17. Freud S., The Basic Writings of Sigmund Freud, New York: Modern Library, 1938.

18. Jung C. G., Dreams Princeton: Princeton University Press, 1974, 47-49.

REFERENCES

1. Aleksanyan A., Ghazaros Aghayan, “Hayots grakanutyan patmut’yun” [“The history of Armenian literature”], vol. 3, Yerevan, “Gitut’yun”, 2015, pp. 460-465 (in Armenian).

2. Alishan Gh., Ancient Beliefs or Pagan Religion of Armenian [Hayots hin havatqy yev het’anosakan krony], Yerevan, 2002 (in Armenian).

3. Aghayan Gh., Yerker [“Works”], Yerevan, Soviet press, 1979 (in Armenian).

4. Aghayan Gh., Yerkeri zhoghovatsu chors hatorov [Collection of works in four volumes], vol. 4, Yerevan, 1963 (in Armenian).

5. Asatryan A., Ghazaros Aghayani gegharvestakan ardzaky [The fictional prose of Ghazaros Aghayan], “Haykakan SSR gitutyunneri teghekagir” [“Bulletin of the Academy of Sciences of the Armenian SSR”], 1961, no. 8, Yerevan, pp. 51-57 (in Armenian).

6. Torosyan A., Banahyusakan motivneri aghayanakan meknutyunnery “Aregnazan kam kakhardakan ashkharh” heqiatum [Aghayan’s Interpretation of Folkloric Motifs in the fairy tale “Aregnazan or Magical World”], “Hayagitut’yan hartser” 1(19), Yerevan, 2020, pp. 143-149 (in Armenian).

7. Torosyan A., Gaghaparakan hartsadrumnery Ghazaros Aghayani “Arutyun yev manvel” vepum [Ideological issues in the novel “Arutyun and Manvel”], “Hayagitut’yan hartser” 1(16), Yerevan, pp. 151-160 (in Armenian).

8. Torosyan A., Artesti deri karevorumy Ghazaros Aghayani “Anahit” heqiat’um [The Importance of Craft in the Fairy Tale “Anahit” by Ghazaros

Aghayan], “Banber Yerevani hamalsarani: Banasirut’yun” [Bulletin of Yerevan University: Philology] 2 (29), Yerevan, pp. 13-19 (in Armenian).

9. Hayrapetyan T., Hay zhoghovrdakan heqiat’neri aghayanakan mshakumneri shurj [About the Aghayan retellings of Amrneian fairy tales], “Voske divan”, 2012-2013, pp. 52-55 (in Armenian).

10. Harutyunyan S., Hay hin vipashkharhy [Ancient Armenian Mythology], Yerevan, 1987 (in Armenian).

11. Hovhannisyan S., Kahkhazgatsumy Hovhannes Tumanyani kyanqum [Premonition in the life of Hovhannes Tumanyan], “Literary magazine”, 2019. URL:https://www.grakantert.am/archives/12739?fbclid=IwAR2l2wGttYxypWZVat3DXVPYTXQQtLj6ShHrWFUNqw5e4Na-wF783Uls94E (Access: 05.05.2023) (in Armenian).

12. Sharuryan H., Yerazi hogebanakan gortsaruytnery hogebanakan ardzakum [The psicholohical issues in the fictional prose], “Hayagitakan handes” 1 (31), Yerevan, 2016, pp. 39-46 (in Armenian).

13. Freud Z., Son I snovideniya [Dream and dream visions], Moscow, 1997 (in Russian).

14. Jung C. G., Vospominaniya, snovidenija, razmishlenija [Memories, dreams and thaughts], Moscow, 1969 (in Russian).

15. Jung C. G., Psichologiya bessoznatel’nogo [The Psychology of Consciousness], Moscow, 1912 (in Russian).

16. Jung C. G., Psichologija i alkhimija [The Psychology and Alchemy], Moscow, 2008 (in Russian).

17. Freud S., The Basic Writings of Sigmund Freud, New York: Modern Library, 1938.

18. Jung C. G., Dreams Princeton: Princeton University Press, 1974, 47-49.

Աստղիկ Սողոյան *– բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտաշխատող և ԵՊՀ դասախոս: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ 19-րդ դարի հայ գրականություն, հայ մանկագրություն, գրական կապեր, գրականության տեսություն: Հեղինակ է 21 գիտական հոդվածների և երկու մենագրության:*

ORCID ID: 0000-0002-0976-9954

astriksoroyan@litinst.sci.am

Astghik Soghoyan – *Ph.D in Philology, Researcher at the Institute of Literature after Manuk Abeghyan of NAS of RA and lecturer at YSU. Scientific interests: Armenian Literature of 19th century, Children’s literature, Literary Connections, Literary theory. Author of 21 articles and two monographs.*

ORCID ID: 0000-0002-0976-9954
astriksoroyan@litinst.sci.am

Астгик Согоян – *кандидат филологических наук, Институт литературы им. Манука Абегяна НАН РА и преподаватель ЕГУ. Научные интересы: армянская литература XIX века, детская литература, литературные связи, теория литературы. Автор 21 статей и 2 монографий.*
ORCID ID: 0000-0002-0976-9954
astriksoroyan@litinst.sci.am

Մերի Խաչատրյան *– ԵՊՀ ուսանող: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ 19-րդ դարի հայ գրականություն, հայ ժողովրդական բանահյուսություն:*
ORCID ID: 0009-0007-0268-0512
meri.khachatryan22@edu.ysu.am
Mary Khachatryan – *Student at YSU. Scientific interests: Armenian Literature of 19th century, Armenian National Folklore.*
ORCID ID: 0009-0007-0268-0512
meri.khachatryan22@edu.ysu.am
Мери Хачатрян – *Студент ЕГУ. Научные интересы: армянская литература XIX века, армянский фольклор.*
ORCID ID: 0009-0007-0268-0512
meri.khachatryan22@edu.ysu.am